Մարդու
իրավունքների
եվրոպական
դատարան

ՄԻԵԴ-Ը 50 ՀԱՐՑՈՒՄ

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

HYE

ՄԻԵԴ-ը
50 հարցում

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Դատարանի հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից և որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Այն նպատակ ունի տրամադրել ընդհանուր տեղեկություններ Դատարանի աշխատանքների վերաբերյալ:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար ծանոթացեք Դատարանի ինտերնետային կայքում Դատարանի Քարտուղարության կողմից տրամադրված փաստաթղթերին: www.echr.coe.int

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

1 Ե՞րբ է ընդունվել Կոնվենցիան:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիան, որն ավելի հայտնի է որպես «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա», ստորագրման է ներկայացվել 1950թ. նոյեմբերի 4-ին և ուժի մեջ մտել 1953թ. սեպտեմբերի 3-ին:

Կոնվենցիան կյանքի կոչեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ներառված որոշ իրավունքներ ու ազատություններ և ստեղծեց միջազգային դատական մարմին՝ իրենց պարտավորությունները չկատարող պետությունների դեմ որոշում կայացնելու իրավասությամբ:

2 Ի՞նչ է Կոնվենցիայի արձանագրությունը:

Կոնվենցիայի արձանագրությունը փաստաթուղթ է, որը Կոնվենցիայի բնագրին ավելացնում է մեկ կամ մի քանի իրավունք կամ փոփոխում դրա որոշ դրույթներ:

Կոնվենցիայում իրավունքներ ավելացնող արձանագրությունները պարտադիր են միայն այն պետությունների համար, որոնք ստորագրել և վավերացրել են դրանք:

Պետությունը, որն ուղղակի ստորագրել է արձանագրությունն առանց այն վավերացնելու, պարտավորված չի լինի դրա դրույթներով:

Մինչ օրս ընդունվել է 14 լրացուցիչ արձանագրություն:

3 Որո՞նք են Կոնվենցիայով ամրագրված իրավունքները:

Կոնվենցիան վավերացրած պետությունները, որոնք հայտնի են նաև որպես «Մասնակից պետություններ», ճանաչում և երաշխավորում են ոչ միայն իրենց քաղաքացիների, այլև իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց Կոնվենցիայով սահմանված հիմնարար քաղաքացիական և քաղաքական իրավունքները:

Կոնվենցիան երաշխավորում է կյանքի, արդար դատաքննության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, խոսքի ազատության, մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփականության պաշտպանության իրավունքները:

Այն արգելում է, մասնավորապես, խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, հարկադիր աշխատանքը, կամայական և ապօրինի ազատազրկումը, Կոնվենցիայով ամրագրված իրավունքներից և ազատություններից օգտվելու խտրականությունը:

4 Զարգանու՞մ է արդյոք Կոնվենցիան:

Այո: Կոնվենցիան զարգանում է հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից դրա դրույթների մեկնաբանության միջոցով: Իր նախադեպային իրավունքի միջոցով Դատարանը Կոնվենցիան վերածել է կենդանի գործիքի. այն ընդլայնել է երաշխավորված իրավունքները և դրանք կիրառել այն դեպքերում, որոնք կանխատեսելի չեն եղել Կոնվենցիայի ընդունման ժամանակ:

Կոնվենցիան զարգանում է նաև նոր իրավունքներ ներդնող արձանագրությունների միջոցով, ինչպես օրինակ՝ 2003թ. հուլիսին ուժի մեջ մտած թիվ 13 Արձանագրությունը, որը բոլոր դեպքերում չեղյալ համարեց մահատիժը, կամ 2005թ. Ապրիլի խտրականության դեմ պայքարի վերաբերյալ թիվ 12 Արձանագրությունը:

5 Արդյո՞ք ներպետական դատարանները պարտավոր են կիրառել Կոնվենցիան:

Կոնվենցիան կիրառելի է ազգային մակարդակում: Կոնվենցիայի մասնակից պետությունները, որոնք պարտավորվել են պաշտպանել Կոնվենցիայով ամրագրված իրավունքները, ներառել են այն իրենց օրենսդրության մեջ: Հետևաբար, ներպետական դատարանները պետք է կիրառեն Կոնվենցիան: Հակառակ դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարան վճիռ կկայացնի պետության դեմ, եթե որևէ անձ բողոքի որ իր իրավունքները չեն պաշտպանվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)

6 Ինչպիսի՞ն է Դատարանի կազմը:

Դատարանի դատավորների թիվը նույնն է, ինչ Կոնվենցիայի մասնակից պետությունների թիվը (ներկայումս 47 դատավոր):

7 Ինչպե՞ս են ընտրվում Դատարանի դատավորները:

Դատավորներն ընտրվում են Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից յուրաքանչյուր Պետության կողմից առաջարկված երեք թեկնածուների ցանկից: Նրանք ընտրվում են ինը տարի ժամկետով՝ առանց ժամկետի երկարացման:

8 Արդյո՞ք դատավորներն իսկապես անկախ են:

Չնայած այն հանգամանքին, որ դատավորներն ընտրվում են ըստ Պետությունների՝ նրանք գործում են անհատապես և չեն ներկայացնում այդ Պետությունը: Նրանք լիովին անկախ են և չեն կարող զբաղվել որևէ այլ գործունեությամբ, որն անհամատեղելի կլինի նրանց անկախության և անկողմնակալության պարտականության հետ:

9 Արդյո՞ք ազգային դատավորը քննում է իր երկրին վերաբերող գործերը:

«Ազգային դատավորները» չեն կարող միանձյա քննել գործերը: Բացառիկ դեպքերում նրանք կարող են հրավիրվել մասնակցելու Կոմիտեին: Այնուամենայնիվ, Դատարանի կազմը միշտ ընդգրկում է «ազգային դատավորին», երբ գործը քննվում է յոթ դատավորից բաղկացած Պալատի կամ տասնյոթ դատավորից բաղկացած Մեծ պալատի կողմից:

10 Ի՞նչ է Քարտուղարությունը և ի՞նչպես է այն գործում:

Դատարանի քարտուղարությունն անձնակազմի այն միավորն է, որն իրավական և վարչական աջակցություն է ցուցաբերում Դատարանին վերջինիս դատավարական գործունեության ընթացքում: Քարտուղարությունում ներգրավված են իրավաբանները, վարչական, տեխնիկական անձնակազմը և թարգմանիչները:

11 Ի՞նչ է դատարանի բյուջեն:

Դատարանի ծախսերը հոգում է Եվրոպայի խորհուրդը, որի բյուջեն ձևավորվում է անդամ պետությունների կողմից վերջիններիս ՀՆԱ-ի և բնակչության թվի հիման վրա հաշվարկված անդամավճարներից:

Դատարանի բյուջեն ներառում է դատավորների և աշխատակիցների աշխատավարձերը և ընթացիկ տարբեր ծախսերը (ՏՏ, պաշտոնական գործուղումներ, բանավոր և գրավոր թարգմանություններ, հրապարակումներ, ներկայացուցչական ծախսեր, իրավաբանական օգնություն, փաստահավաք առաքելություններ և այլն):

12 Կարո՞ղ է Դատարանի կազմը փոխվել ըստ քննվող գործի:

Այո, գործերը քննվում են հիմնական չորս հիմնական միավորներից մեկի կողմից:

Ակնհայտորեն անընդունելի գանգատները քննվում են մեկ դատավորի կողմից՝ միանձնյա: Երեք դատավորից կազմված Կոմիտեն կարող է միաձայն որոշում կայացնել գործի ընդունելիության վերաբերյալ և քննել այն ըստ էության՝ Դատարանի հստակ ձևավորված նախադեպային իրավունքի շրջանակներում: Դիմումը կարող է ուսումնասիրվել յոթ դատավորից բաղկացած Պալատի կողմից, որի որոշումները, հիմնականում գործի ընդունելիության և այն ըստ էության քննելու վերաբերյալ,

ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

Բացառիկ դեպքերում 17 դատավորներից բաղկացած Մեծ պալատը քննում է այն գործերը, որոնց կապակցությամբ Պալատը զիջել է ընդդատությունը կամ երբ Մեծ պալատի քննարկմանը գործը փոխանցելու խնդրանքը բավարվել է:

13 Ո՞րն է Պալատի և Բաժանմունքի տարբերությունը:

Բաժանմունքը վարչական միավոր է, իսկ Պալատը տվյալ բաժանմունքի շրջանակներում դատական միավոր է: Դատարանն ունի հինգ բաժանմունք, որոնցում ձևավորվում են Պալատները: Յուրաքանչյուր բաժանմունք կազմված է նախագահից, փոխնախագահից և այլ դատավորներից:

14 Ինչպե՞ս են ձևավորվում Պալատները և Մեծ պալատը:

Պալատի կազմում ներգրավված են Բաժանմունքի նախագահը, որին տրվում է գործը, «ազգային դատավորը» (այն պետության անունից ընտրված դատավորը, որի դեմ գանգատ է ներկայացվել), և հինգ այլ դատավորներ, որոնք ռոտացիոն կարգով նշանակվում են բաժանմունքի նախագահի կողմից:

Մեծ պալատը բաղկացած է Դատարանի նախագահից, փոխնախագահներից, բաժանմունքների նախագահներից, ինչպես նաև ազգային դատավորից և պատահական կարգով ընտրված դատավորներից: Գործի փոխանցման դեպքերում այն դատավորները, որոնք արդեն քննել են գործը Պալատի կազմով, չեն ներգրավվում Մեծ պալատի կազմում:

15 Ե՞րբ են գործերը քննվում Մեծ պալատի կողմից:

Մեծ պալատում դատավարության նախաձեռնումը կատարվում է երկու տարբեր ձևով՝ փոխանցման և իրավազորություններից հրաժարման:

Պալատի կողմից վճիռ կայացնելուց հետո կողմերը կարող են խնդրել գործը փոխանցել Մեծ պալատի քննարկմանը, իսկ այդպիսի խնդրանքները բավարվում են բացառիկ հիմքերով: Մեծ պալատի մի խումբ դատավորների կազմը որոշում է, թե արդյոք գործը պետք է փոխանցվի Մեծ պալատին՝ նոր քննարկման համար:

Գործերը փոխանցվում են Մեծ պալատին նաև այն դեպքում, երբ Պալատներից մեկը հրաժարվել է իր իրավազորություններից, թեև դա նույնպես բացառիկ դեպք է: Պալատը, որի քննարկմանն է ներկայացվել գործը, կարող է հրաժարվել իր իրավազորություններից, եթե գործը բարձրացնում է յուրջ հարցեր, որոնք ազդում են Կոնվենցիայի մեկնաբանման վրա կամ եթե առկա է Դատարանի նախորդ վճռի հետ

Հաճախակի տրվող հարցեր

անհամապատասխանության վտանգ:

16 Արդյո՞ք դատավորը կարող է հրաժարվել մասնակցելու գործի քննությանը:

Այո: Դատավորները պարտավոր են հրաժարվել գործի քննությանը մասնակցելուց, եթե նախկինում նրանք այս կամ այն կարգավիճակով արդեն առնչվել են այդ գործին: Սա կոչվում է կամովին հեռացում: Այս դեպքերում դատավարության ժամանակ նրանց փոխարինում են այլ դատավորներ կամ նշանակվում է ժամանակավոր (ad hoc) դատավոր, եթե ազգային դատավորն է կամովին հեռանում:

17 Ի՞նչ է ժամանակավոր (ad hoc) դատավորը:

Ժամանակավոր (ad hoc) դատավորը նշանակվում է շահագրգիռ կառավարության կողմից, երբ ազգային դատավորը չի մասնակցում դատավարությանն անհնարինության, կամովին հեռացման կամ ազատման դեպքերում:

18 Ո՞րն է Դատարանի իրավասությունների շրջանակը:

Դատարանը սեփական նախաձեռնությամբ չի կարող գործերի քննություն նախաձեռնել: Այն իրավասու է քննել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խախտումների մասին բողոքները, և այն էլ անհատական կամ միջպետական գանգատների հիման վրա:

Դատարանի վարույթը

19 Ո՞վ կարող է դիմել Դատարան:

Կոնվենցիան տարբերակում է գանգատի՝ երկու տեսակ՝ անհատական գանգատներ, որոնք ներկայացվում են անձի, անձանց խմբի, առևտրային կամ ոչ կառավարական կազմակերպության կողմից իրենց իրավունքների խախտման վերաբերյալ, ինչպես նաև միջպետական գանգատներ՝ ներկայացված մեկ պետության կողմից մեկ այլ պետության դեմ:

Դատարանի հիմնադրման օրվանից գրեթե բոլոր գանգատները ներկայացվել են ֆիզիկական անձանց կողմից, ովքեր իրենց գործերն ուղղակիորեն բերել են Դատարան Կոնվենցիայով ամրագրված մեկ կամ մի քանի իրավունքների խախտման գանգատներով:

20 Ու՞մ դեմ են ներկայացվում գործերը:

Գործերը կարող են ներկայացվել մեկ կամ մի քանի պետությունների դեմ, որոնք վավերացրել են Կոնվենցիան: Օրինակ՝ երրորդ երկրների կամ

անձնանց դեմ ցանկացած դիմում կհայտարարվի անընդունելի:

21 Ինչպե՞ս են գործերը ներկայացվում Դատարան:

Ֆիզիկական անձիք կարող են անմիջականորեն բողոք ներկայացնել, իսկ փաստաբանական աջակցությունն անհրաժեշտ չէ դատավարական գործընթացի սկզբնական փուլում: Բավարար է Դատարան ուղարկել պատշաճ կերպով լրացված գանգատ անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին: Մակայն Դատարանում գանգատի գրանցումը երաշխիք չէ, որ այն ընդունելի կճանաչվի կամ կբավարավի ըստ էության քննելու արդյունքում:

Կոնվենցիայի համակարգը նախատեսում է Դատարանի «հեշտ» մատչելիություն, որը ցանկացած անձի հնարավորություն է տալիս է գործ նախաձեռնել, եթե նույնիսկ նա չունի միջոցներ կամ ապրում է անդամ պետության հեռավոր շրջաններում: Այս առումով դատարանում գործը քննելու համար վճարներ նախատեսված չեն:

22 Ո՞րն է անհատական և միջպետական գանգատների տարբերությունը:

Դատարան ներկայացված գանգատների մեծ մասը մասնավոր անձնաց կողմից ներկայացված անհատական գանգատներ են: Պետությունը նույնպես կարող է գանգատ ներկայացնել Կոնվենցիայի մասնակից մեկ այլ պետության դեմ: Դա կոչվում է միջպետական դիմում:

23 Անհրաժե՞շտ է արդյոք փաստաբանի մասնակցությունը Դատարանում գործի քննությանը:

Իրավական ներկայացուցչությունը պարտադիր չէ դատավարական գործընթացի սկզբում: Յուրաքանչյուր ոք ուղղակիորեն կարող է գործ ներկայացնել Դատարան: Իրավաբանական օգնությունն անհրաժեշտ է դառնում, երբ Դատարանը գործի վերաբերյալ իր դիտարկումների մասին ծանուցում է պատասխանող կառավարությանը: Անհրաժեշտության դեպքում դատավարության այդ փուլում դիմումատուներին կարող է տրմադրվել իրավաբանական օգնություն:

24 Ո՞վ է իրավասու իրավական փաստարկներ ներկայացնել Դատարան:

Գոյություն չունի լիազոր փաստաբանների ցանկ Դատարանի առջև գրավոր կամ բանավոր փաստարկներ ներկայացնելու համար: Դիմումատուին կարող է ներկայացնել Կոնվենցիային մասնակից պետություններից որևէ մեկում փաստաբանական գործունեություն իրականացնելու

որակավորում ունեցող ցանկացած փաստաբան կամ Պալատի նախագահի կողմից լիազորված փաստաբանը:

25 Որո՞նք են Դատարանում վարույթի տարբեր փուլերը:

րծերի քննության երկու հիմնական փուլ՝ ընդունելիության և գործի ըստ էության քննության (այսինքն՝ բողոքների քննության) փուլերը: Գանգատի ուսումնասիրությունն անցնում է նաև տարբեր այլ փուլերով:

Մեկ դատավորի կազմով դատական մարմինը անընդունելի է համարում գանգատը, եթե այն անընդունելի է իսկզբանե: Այս որոշումները չեն կարող բողոքարկվել:

Կոմիտեն տալիս է գործի վերաբերյալ վերջնական որոշում կամ վճիռ՝ Դատարանի կայուն ձևավորված նախադեպային իրավունքի հիման վրա:

Պալատը գործի վերաբերյալ իր դիտարկումների մասին ծանուցում է պատասխանող կառավարությանը: Երկու կողմերը ներկայացնում են իրենց գրավոր դիտարկումները: Դատարանն այնուհետև որոշում է հրապարակային լսումներ անցկացնելու անհրաժեշտության հարցը, ինչն իրականացվում է բացառիկ դեպքերում՝ հաշվի առնելով Դատարանի կողմից քննված գործերի քանակը: Եվ վերջապես, Պալատը կայացնում է վճիռ, որը վերջնական է դառնում եռամսյա ժամկետի ավարտին, որի ընթացքում դիմումատուն կամ կառավարությունը կարող են դիմել գործը Մեծ պալատի քննարկմանը փոխանցելու համար: Եթե փոխանցման վերաբերյալ դիմումը ընդունվում է Մեծ պալատի մի խումբ դատավորների կազմի կողմից, գործը վերանայվում է Մեծ պալատի կողմից և անհրաժեշտության դեպքում ընթանում են հրապարակային լսումներ: Մեծ պալատի վճիռները վերջնական են:

26 Որո՞նք են ընդունելիության պայմանները:

Դատարանի կողմից ընդունելի համարվելու համար գանգատը պետք է բավարարի որոշակի պահանջների, հակառակ դեպքում բողոքները նույնիսկ չեն քննվում: Գործը կարող է Դատարան բերվել միայն իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները սպառելուց հետո, այսինքն՝ իրենց իրավունքների խախտման մասին գանգատ ներկայացրած անձիք նախ պարտավոր են գործը ներկայացնել համապատասխան պետության դատական ատյաններին մինչև հնարավոր ամենաբարձր ատյանը : Այս կերպ պետությանը հնարավորություն է ընձեռնվում ազգային մակարդակում վերացնել ենթադրյալ խախտումը:

Դիմումատուի բողոքը պետք է վերաբերի Կոնվենցիայով սահմանված մեկ կամ մի քանի իրավունքներին: Դատարանը չի կարող քննել որևէ այլ իրավունքի խախտման վերաբերյալ բողոքները: Գանգատները պետք

է Դատարան ներկայացնել գործի վերաբերյալ վերջին դատական որոշումից հետո վեց ամսվա ընթացքում, որը սովորաբար կլինի տվյալ պետության բարձրագույն դատական ատյանի վճիռը: Դիմումատուն պետք է անձնապես և ուղղակիորեն տուժող հանդիսանա Կոնվենցիայի խախտման արդյունքում և հենց իրեն պետք է պատճառված լինի էական վնասը: Չպետք է մոռանալ, իհարկե, որ գանգատները կարող են ներկայացվել Կոնվենցիայի մասնակից մեկ կամ մի քանի պետությունների դեմ և ոչ որևէ այլ պետության կամ անձի դեմ:

27 Կարո՞ղ են ոչ կառավարական կազմակերպությունները կամ պետությունները մասնակցել դատավարություններին:

Այո, և ոչ կառավարական կազմակերպությունները և պետությունները կարող են գանգատ ներկայացնել Դատարան: Դատարանի նախագահը կարող է նաև նրանց թույլատրել որպես երրորդ կողմ մասնակցելու դատավարությանը:

28 Ի՞նչ է երրորդ կողմը:

Դատարանի նախագահը կարող է թույլատրել դիմումատուից բացի այլ անձի կամ Կոնվենցիայի մասնակից այլ պետության, բացառությամբ այն պետության, որի դեմ բողոք է բերվել Դատարան, մասնակցել դատավարություններին: Սա կոչվում է երրորդ կողմի միջամտություն: Այս անձը կամ պետությունը իրավունք ունի ներկայացնել գրավոր նկատառումներ և մասնակցել լսումներին:

29 Դատարանը կարո՞ղ է նշանակել փորձագետներ կամ լսել վկաների:

Այո: Բացառիկ դեպքերում, Դատարանը կարող է հետախուզական գործողություններ կատարելու որոշում կայացնել, ինչպես նաև մեկնել այլ երկրներ տվյալ գործին վերաբերող փաստերը պարզաբանելու նպատակով: Դատարանի պատվիրակությունը կարող է նաև ապացույցներ հավաքել վկաներից և տեղում քննություն իրականացնել:

Դատարանը երբեմն ներգրավում է նաև փորձագետների, օրինակ, երբ խնդրում է բժիշկ-փորձագետներին զննել դիմումատուին կալանավայրում:

30 Դատարանն անցկացնու՞մ է արդյոք հրապարակային լսումներ:

Դատարանում ընթացակարգը հիմնականում գրավոր է, բայց ժամանակ առ ժամանակ առանձնահատուկ գործերով որոշում է անցկացնել հրապարակային լսումներ:

Լսումները տեղի են ունենում Ստրասբուրգում գտնվող Մարդու իրավունքների պալատում: Լսումները հրապարակային են, եթե համապատասխան Պալատի նախագահի կամ Մեծ պալատի

կողմից որոշում չի ընդունվում դռնփակ լսումներ անցկացնելու մասին: Լրատվամիջոցներին և հանրությանը սովորաբար թույլ է տրվում մասնակցել լսումներին՝ Դատարանի մուտքի մոտ ներկայացնելով իրենց լրագրողական քարտը կամ անձնագիրը: Բոլոր լսումները նկարահանվում են և հեռարձակվում Դատարանի կայքում նույն օրը՝ (տեղական ժամանակով)14:30-ից սկսած:

31 Ի՞նչ են նախնական առարկությունները:

Նախնական առարկությունները պատասխանող կառավարության կողմից ներկայացված փաստարկներ են ի պաշտպանություն գործն ըստ էության չքննելու իրենց պահանջի:

32 Ի՞նչ է բարեկամական կարգավորումը:

Բարեկամական կարգավորումը կողմերի միջև պայմանավորվածություն է վերջ դնելու գանգատի հիման վրա նախաձեռնված դատավարությանը: Երբ կողմերը համաձայնում են կարգավորել իրենց վեճն այս կերպ, արդյունքում, սովորաբար, պետությունը դիմումատուին վճարում է որոշակի գումար: Բարեկամական կարգավորման պայմաններն ուսումնասիրելուց հետո և, եթե գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանություն համար անհրաժեշտ չէ շարունակել գանգատի քննությունը, Դատարանը դադարեցնում է այն:

Դատարանը միշտ խրախուսում է կողմերին բանակցել բարեկամական կարգավորման շուրջ: Եթե կողմերի միջև համաձայնություն ձեռք չի բերվում, ապա Դատարանն անցնում է է գանգատի ըստ էության քննությանը:

33 Կարո՞ղ է Դատարանը կարգադրել ժամանակավոր միջոցներ:

Գանգատը ստանալուց հետո Դատարանը կարող է պահանջել տվյալ պետությունից ձեռնարկել ժամանակավոր միջոցներ մինչև գանգատի վերաբերյալ որոշում կայացնելը: Այս դեպքերում սովորաբար Դատարանը պահանջում է պետությունից ձեռնպահ մնալ այս կամ այն գործողությունից, օրինակ, չվերադարձնել անձանց այն երկրներ, որտեղ նրանք կանգնած են մահվան կամ խոշտանգում վտանգի առաջ:

34 Արդյո՞ք Դատարանի խորհրդակցությունները բաց են հանրության համար:

Ոչ, Դատարանի խորհրդակցությունը միշտ գաղտնի է:

35 Արդյո՞ք Պետություններն երբևիցե հրաժարվել են ամագործակցել Դատարանի հետ:

Եղել են դեպքեր, երբ պետությունները ձեռնպահ են մնացել կամ նույնիսկ հրաժարվել են Դատարանին տրամադրել համապատասխան գանգատի ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկությունները կամ փաստաթղթերը:

Նման դեպքերում դատարանը կարող է վճռիռ կայացնել տվյալ պետության դեմ Կոնվենցիայի 38-րդ հոդվածի ուժով (Դատարանին գործի քննության համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու Պետության պարտավորությունը):

36 Որքա՞ն ժամանակ է սովորաբար տևում Դատարանում վարույթը:

Անհնար է հստակ սահմանել վարույթի տևողությունը:

Դատարանը փորձում է զբաղվել գործերով վերջիններիս ներկայացման պահից երեք տարվա ընթացքում, սակայն որոշ գործեր կարող են քննվել շատ ավելի երկար, մինչդեռ որոշ գործերի քննությունն էլ կարող է շատ արագ ընթանալ:

Դատարանում վարույթի տևողությունն ակնհայտորեն կախված է գործի բնույթից, դատավարական միավորի կազմից, Դատարանին տեղեկություններ տրամադրելու համար կողմերի գործադրած ջանասիրությունից, ինչպես նաև մի շարք այլ գործոններից, ինչպիսիք են, օրինակ, Պալատի կազմով լսումների անցկացման հաստատումը կամ Մեծ պալատի քննությանը գործի փոխանցումը:

Որոշ դիմումներ կարող են համարվել հրատապ և ուսումնասիրվել արտահերթ կարգով, հատկապես այն դեպքերում, երբ դիմումատուին կարող է սպառնալ անխուսափելի վտանգ կամ նրան կարող է հասցվել ֆիզիկական վնաս:

Դատարանի որոշումներն ու վճիռները

37 Ո՞րն է որոշման և վճռի տարբերությունը:

Որոշումը սովորաբար կայացվում է մեկ դատավորի, Կոմիտեի կամ Դատարանի Պալատի կողմից: Այն վերաբերում է միայն գործի ընդունելիությանը և ոչ թե գործի էությանը : Սովորաբար, երբ Պալատը միաժամանակ է քննում գործի ընդունելիությունն ու այն ըստ էության, ապա այս դեպքերում կայացվում է վճիռ:

38 Արդյո՞ք պարտադիր են Դատարանի վճիռները:

Կոնվենցիայի խախտում արձանագրող վճիռները համապատասխան պետության համար կրում են պարտադիր բնույթ և ենթակա են վերջինիս կողմից պարտադիր կատարման:

Հաճախակի տրվող հարցեր

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն վերահսկում է վճիռների կատարման գործընթացը, մասնավորապես Դատարանի կողմից դիմումատուների կրած վնասի փոխհատուցման համար սահմանված գումարի վճարումը:

39 Կարելի՞ է բողոքարկել վճիռները:

Անընդունելիության վերաբերյալ որոշումները, ինչպես նաև Կոմիտեների կամ Մեծ պալատի վճիռները վերջնական են և չեն կարող բողոքարկվել: Այնուամենայնիվ, կողմերը Պալատի վճռից հետո երեք ամսվա ընթացքում կարող են պահանջել գործը փոխանցել Մեծ պալատի քննությանը: Մեծ պալատի քննությանը գործի փոխանցման դիմումներն ուսումնասիրվում են դատավորների կազմի կողմից, որն էլ որոշում է փոխանցման հիմնավորվածության հարցը:

40 Ինչպե՞ս են ի կատար ածվում Դատարանի վճիռները:

Երբ Դատարանը Կոնվենցիայի խախտման վերաբերյալ վճիռ է կայացնում, գործի փաթեթը փոխանցում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին, որը համապատասխան երկրի և Դատարանի վճիռների կատարման համար պատասխանատու ծառայության հետ համատեղ որոշում է վճիռների կատարման, ինչպես նաև հետագայում Կոնվենցիայի դրույթների նմանատիպ խախտումների կանխարգելման կարգը: Այս ամենն ուղեկցվում է ընդհանուր միջոցառումների ընդունմամբ, մասնավորապես օրենսդրական փոփոխություններով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև անհատական միջոցառումների կիրառմամբ:

41 Որո՞նք են խախտում արձանագրող վճիռների հետևանքները:

Խախտման արձանագրման արդյունքում համապատասխան պետությունը պետք է զգոն լինի ապագայում նմանատիպ խախտումները բացառելու համար, հակառակ դեպքում Դատարանը կարող է նոր վճիռ կայացնել այդ պետության դեմ: Որոշ դեպքերում պետությունը ստիպված է լինում փոխել իր օրենսդրությունը այն Կոնվենցիային համահունչ դարձնելու նպատակով:

42 Ի՞նչ է արդարացի բավարարումը:

Երբ Դատարանը տվյալ պետության դեմ վճիռ է կայացնում և եզրակացնում է, որ դիմումատուն վնաս է կրել, ապա դիմումատուի համար սահմանում է արդարացի բավարարում, այսինքն՝ կրած վնասի փոխահատուցման համար համապատասխան գումար: Նախարարների կոմիտեն հետևում է, որ Դատարանի կողմից սահմանված ցանկացած

գումար իրապես վճարվի դիմումատուին:

43 Ի՞նչ է պիլոտային գործը:

Վերջին մի քանի տարիներին Դատարանը մշակել է նոր ընթացակարգ՝ հաշվի առնելով նմանատիպ խնդիրներին վերաբերող, այսպես կոչված պարբերական գանգատների զանգվածային ներհոսքը: Գանգատներ, որոնք պայմանավորված են Կոնվենցիայի հետ ազգային օրենսդրության անհամապատասխանությամբ:

Այսպիսով, վերջերս Դատարանը կիրառեց նոր ընթացակարգ, համաձայն որի ուսումնասիրվում են նմանատիպ գանգատներից մեկը կամ մի քանիսը, իսկ այդ շարքի մի քանի այլ գործերի ուսումնասիրումը հետաձգվում է: Երբ Դատարանը կայացնում է իր վճիռը պիլոտային գործի վերաբերյալ, այն կոչ է անում տվյալ պետության կառավարությանը Կոնվենցիային համապատասխանեցնել ազգային օրենսդրությունը և նշում է ձեռնարկվող անհրաժեշտ ընդհանուր միջոցները, որից հետո Դատարանն ուսումնասիրում է մնացած նմանատիպ գործերը:

44 Ի՞նչ է հատուկ կարծիքը:

Դատավորները կարող են արտահայտել իրենց կարծիքը իրենց կողմից ուսումնասիրած գործի վերաբերյալ, իսկ նրանց կարծիքը կցվում է կայացված վճռին: Ընդհանուր առմամբ, նրանք բացատրում են, թե ինչու են քվեարկել մեծամասնության պես (Դատարանի մեծամասնության դիրքորոշմանը համընկնող հատուկ կարծիք) կամ, ընդհակառակը, թե ինչու չեն համաձայնել մեծամասնության հետ (Դատարանի մեծամասնության դիրքորոշմանը չհամընկնող հատուկ կարծիք):

Դատարանի գործունեությունը

45 Քանի՞ գանգատ է ներկայացվում Դատարան:

Դատարանն իր սեփական հաջողության զոհն է: Տարեկան ավելի քան 50,000 նոր գանգատ է ներկայացվում Դատարան: Դատարանի կայացրած որոշ վճիռների ազդեցությունը և մասնակից պետությունների քաղաքացիների շրջանում Դատարանի աճող հեղինակությունն էապես ազդում է ամեն տարի ներկայացվող գանգատների քանակի վրա:

46 Ո՞ր իրավունքներին են մեծ մասամբ վերաբերում գործերը:

Իր հիմնադրման օրվանից կայացրած վճիռներում արձանագրված խախտումների գրեթե կեսը վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին դատաքննությունների արդարացիության և տևողության առումներով: Իրականում, Դատարանի կողմից արձանագրված խախտումների 58%-ը վերաբերում են կամ Կոնվենցիայի 6-րդ հոդվածին (արդար դատաքննության իրավունք) կամ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածին (սեփականության իրավունք): Այնուհետև, ուսումնասիրված գործերի մոտ 11 % -ի դեպքում Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 2-րդ և 3 - րդ հոդվածների լուրջ խախտում (կյանքի իրավունք և խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելում):

47 Արդյունավետ են արդյոք ժամանակավոր միջոցառումները:

Եթե որոշ պետություններ հետևում են ժամանակավոր միջոցառումների վերաբերյալ Դատարանի հանձնարարականներին, ապա երբեմն որոշ պետություններ չեն ապահովում Դատարանի պահանջները: Այս պետությունները, ամենայն հավանականությամբ Դատարանի կողմից կճանաչվեն որպես Կոնվենցիայի 34 -րդ հոդվածով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարող (անհատական գանգատի իրավունք):

48 Դատարանն ուսումնասիրում է արդյո՞ք հանրային նշանակության խնդիրները:

Դատարանը, իհարկե, անդրադարձել է այնպիսի խնդիրների, որոնք անհնար էր կանխատեսել 1950 թ.-ին Կոնվենցիայի ստորագրման ժամանակ: Անցյալ 50 տարիների ընթացքում դատարանն անդրադարձել է հանրային նշանակության բազմաթիվ խնդիրների, ինչպիսիք են հղիության վաղաժամկետ ընդհատումը, ինքնասպանության աջակցումը, մերկացման հետ զուգորդված զննումը, ստրկությունը, սեփական ծագումն իմանալու իրավունքը, կրթական հաստատություններում իսլամական գլխաշորերի կրումը, լրագրողական աղբյուրների պաշտպանությունը, գնչուների նկատմամբ խտրական վերաբերմունքը և բնապահպանական խնդիրներ:

Դատարանի ապագան

49 Ի՞նչ է թիվ 14 Արձանագրությունը:

Թիվ 14 Արձանագրության նպատակն է ապահովել Դատարանի երկարաժամկետ արդյունավետությունը՝ գանգատների ընտրության և մշակման օպտիմալացմամբ: Այն նախատեսում է, մասնավորապես, դատական նոր կազմավորումների ստեղծում ամենապարզ գործերի քննության համար, ընդունելիության նոր չափանիշ՝ «զգալի վնաս» և դատավորների գործունեության ժամկետի երկարաձգում մինչև ինը տարի՝ առանց վերընտրվելու հնարավորության: Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2010 թ. հունիսի 1– ին:

50 Ինչպիսի՞ բարեփոխումներ են նախատեսված:

Թիվ 14 Արձանագրությունից անկախ՝ անհրաժեշտ է համարվել շարունակել Կոնվենցիայի համակարգի բարեփոխումները, և «Իմաստունների խումբը», որը բաղկացած է ակնառու իրավաբաններից, 2006 թ.-ին Նախարարների կոմիտեին է ներկայացրել իր հաշվետվությունը: Խումբը, ի թիվս այլ լուծումների, առաջարկել է ստեղծել նոր դատական զտիչ համակարգ, և մշակել Դատարանի գործունեության հետ կապված կազմակերպական տարրերի վերաբերյալ կանոնադրություն, որի լրամշակման կարգը կլինի ավելի ճկուն, քան Կոնվենցիայի պահանջներին համաձայն միջազգային պայմանագրի վերանայման գործընթացը: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների ղեկավար կոմիտեն ներկայումս ուսումնասիրում է տարբեր առաջարկություններ:

Հուլիս 2012

Մարդու իրավունքների եվրոպական դատարան
Հասարակայնության հետ կապերի բաժին
Council of Europe
67075 Strasbourg cedex
France

www.echr.coe.int



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

www.echr.coe.int